ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2022թ. N 248-Ա

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ՝ ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11 -ի N 5-Ն որոշման 2-րդ կետի, և հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Արմեն Արամի Վարդանյանի դիմումը (մտից՝ 2022 թվականի օգոստոսի 26-ի N 1348)՝ ***որոշում եմ՝***

1. Ձևակերպել կառուցապատող Արմեն Արամի Վարդանյանի կողմից իրականացված Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 32/3 հասցեում գտնվող բնակելի տան և դրան կից օժանդակ շինության շահագործման թույլտվությունը:
2. Արմեն Արամի Վարդանյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031385 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շինարարության ավարտը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Արմեն Արամի Վարդանյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 26
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022թ. N 249-Ա

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հաշվի առնելով «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի կողմից լիազորված «Ռեդինետ» ՓԲ ընկերության տնօրեն Ա. Քարամյանի՝ ս/թ օգոստոսի 25-ի N գրությունը (մտից՝ 2022 թվականի օգոստոսի 25-ի N 1342)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի և ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության լիազորած անձ «Ռեդինետ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2020 թվականի օգոստոսի 26-ին կնքված՝ հենասյուների օգտագործման իրավունքի տրամադրման N 47 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով՝

«8.5. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև գրագրությունը, ծանուցումները, բոլոր տեսակի փաստաթղթերը կարող են ուղարկվել Կողմերի էլեկտրոնային հասցե(ներ)ին: Կողմի էլեկտրոնային հասցե (ներ)ին ուղարկված գրագրությունը, ծանուցումը, փաստաթղթերը կհամարվեն ուղարկվելու ամսաթվին և ժամանակին պատշաճ ուղարկված (հանձնված), պայմանավոր եթե էլեկտրոնային հասցե(ներ)ին փոխանցումն իրականացվում է աշխատանքային ժամերից դուրս ծանուցումը կհամարվի ստացված հաջորդ աշխատանքային օրվա սկզբնաժամին:

8.6. Պայմանագրի, Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև կազմված բոլոր տեսակի փաստաթղթերի ստորագրված, կնիքված, էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) և Կողմերի էլեկտրոնային հասցե(ներ)ին ուղարկված տարբերակը համարվում է վավեր և պարտադիր Կողմերի համար:

8.7. Կողմերի տվյալների՝ անվանման (անվան), գտնվելու (բնակության) վայրի, բանկային վավերապայմանների, էլեկտրոնային հասցե(ներ)ի կամ այլ տվյալների փոփոխման դեպքում Կողմերն անհապաղ էլեկտրոնային հասցե(ներ)ին ուղարկված

փոփոխությունների մասով լրացուցիչ համաձայնագրի կնքում ճի պահանջվում: Համապատասխան ծանուցման բացակայության դեպքում նախկին տվյալներով կատարված ցանկացած գործողություն համարվում է պատշաճ կատարված:»

2) Պայմանագրի հավելվածի 1.1 կետի աղյուսակը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

քաղաք Ջերմուկ, Մելիք Ադամյան փողոց	7 (յոթ) հատ
քաղաք Ջերմուկ, Շահումյան փողոց	30 (երեսուն) հատ
քաղաք Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս	75 (յոթանասունհինգ) հատ
քաղաք Ջերմուկ, Հ 42 մայրուղի	20 (քսան) հատ
գյուղ Կեչուտ	13 (տասներեք) հատ
գյուղ Գնդեվազ	50 (հիսուն) հատ
Ընդամենը՝	*195 (հարյուր իննսունհինգ) հատ*

2. «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության հետ սույն որոշման 2-րդ կետում նշված համաձայնագրի ստորագրման պահից և տարածվում է 2022 թվականի սեպտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 31
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022թ. N 250-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչագան Հովհաննիսյանի՝ 2022 թվականի օգոստոսի 31-ի հայտը՝ (մտից N 1373, 31.08.2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի Գործարանային փողոցի 1-ին փակուղու N 8 հասցեում գտնվող սեփական հողամասում հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչագան Հովհաննիսյանին տալ նախագծման թույլտվություն:

2. Վաչագան Հովհաննիսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վաչագան Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 31
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022թ. N 251-Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ 2022 թվականի օգոստոսի 29-ի հայտը՝ (մտից N 1367, 29.08. 2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող N զորամասի տարածքով անցնող միջին ճնշման ստորգետնյա գազատարի վերատեղադրման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը տալ նախագծման թույլտվություն:

2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 31
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022թ. N 252-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի գլխավոր մասնագետի՝ 2022 թվականի օգոստոսի 29-ի դիմումը՝ (մտիցներ N 1365, 29.08.2022 թ.)՝ ***որոշում եմ***

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տալ Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում գտնվող Վ. Սարգսյանի անվան զբոսայգին բարեկարգելու շինարարության թույլտվություն:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 31
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022թ. N 253-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՊՈՒՐԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի գլխավոր մասնագետի՝ 2022 թվականի օգոստոսի 29-ի դիմումը՝ (մտիցներ N 1364, 29.08.2022 թ.)՝ ***որոշում եմ***

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տալ Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցին հարակից տարածքում «Ազատամարտիկների պուրակ» կառուցելու շինարարության թույլտվություն:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 31
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2022թ. N 254-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,18601 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Լևոն Զավենի Աբգարյանի դիմումը (մտից՝ N 1398, 05.09.2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Լևոն Զավենի Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 0,18601 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0001-0005) տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 20-րդ փողոց, 4-րդ փակուղի N 3 հողամաս:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 12
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2022թ. N 255-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՏՐՎԱԾ N 55 - N 58 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Սուն Սոլար», «Այ Սոլար», «Արմ Սոլար» և «Դուստր Սոլար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից ներկայացված նախագծային փաստաթղթերը (մտից N 1463,1464,1645 և 1466, 27.09.2022 թ.) և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման 108-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի նոյեմբերի 24-ին «Սուն Սոլար», «Այ Սոլար», «Արմ Սոլար» և «Դուստր Սոլար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրված N 55, N 56, N 57 և N 58 շինարարության թույլտվությունների մեջ կատարել լրացում. շինարարության թույլտվությունների «օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները» տողում ավելացնել «110/10 և 10/08 ենթակայանների շենքերի կառուցում» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սուն Սոլար», «Այ Սոլար», «Արմ Սոլար» և «Դուստր Սոլար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 27
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2022թ. N 256-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Սերյոժայի Հունանյանի դիմումները (մտից N 202՝ 27.01.2021 թ. և N 1339՝ 25.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 23-ի N 203082022-10-0012 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 14 հասցեում գտնվող 35,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 32,63 քմ) ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 35,6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Սերյոժայի Հունանյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).
   2)առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:
4. Կարեն Սերյոժայի Հունանյանը պարտավոր է վճարել՝
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝39200 (երեսունիննը հազար երկու հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը,
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝28850 (քսանութ հազար ութ հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կարեն Սերյոժայի Հունանյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Սերյոժայի Հունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 28
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2022թ. N 257-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 281-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–25092021-10-0215 որոշումը և «ԱՓԻՆԳ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հողամասի նոր հատակագիծը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 13-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 5-րդ փակուղու վրա գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 53,044 քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 281-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝ որոշման

1) վերնագրում և 1-ին կետում «53,044» թիվը փոխարինել «53,0» թվով,

2) 1-ին կետում «օրինական» բառից հետո կատարել լրացում՝ ավելացնելով *«. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20210YP0JK»*

3) որոշման 3-րդ կետում՝

ա. «բնակելի» բառը փոխարինել «խառը» բառով,

բ. «(կցվում են)» բառից հետո կատարել հետևյալ լրացումը՝ *«՝ համապատասխանեցնելով քաղաքի գլխավոր հատակագծին»:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2022թ. N 258-Ա

ՍԵՐԻՆԵ ԱԶԱՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմում գործող Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների ուսումնասիրման հանձնաժողովի կողմից ս/թ օգոստոսի 11-ին կազմված բնակարանային պայմանների ուսումնասիրման վերաբերյալ արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Մերժել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Սերինե Ազատի Սիմոնյանի՝ բնակարանի կարիքավոր ճանաչելու և բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդգրկելու մասին դիմումը՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

- ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունում զոհված Արթուր Լևոնի Մարտիրոսյանի և Սերինե Ազատի Սիմոնյանի միջև ամուսնության պետական գրանցում կատարված չէ, առկա է միայն երեխաների նկատմամբ հայրության ճանաչման մասին որոշումները: Սերինե Ազատի Սիմոնյանը չի հանդիսանում զոհված զինծառայողի ընտանիքի բնակարանային ապահովության շահառու

- առկա է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, ըստ որի զոհվածի որդիները ճանաչվել են ժառանգական գույք հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 20-րդ շենքի N 26 բնակարանի 1/6 բաժնի սեփականատերեր (յուրաքանչյուրը):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2022թ. N 259-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 8-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ս/թ սեպտեմբերի 13-ից 14-ը Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետևանքով Ջերմուկ համայնքում առաջացած՝ հակառակորդի կողմից հրետանային միջոցների, ականանետերի և այլ զինատեսակների կիրառմամբ մարտական և քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման վտանգի առկայությամբ պայմանավորված «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատանքների չնախատեսված ժամանակավորապես դադարեցման պայմաններում պահպանել բոլոր աշխատողների աշխատավարձերը:

2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում վճարել աշխատողների՝ սեպտեմբեր ամսվա աշխատավարձը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 30
ք. Ջերմուկ